

Այս պատմական աղբիւրներէն գլխաւորը դարձեալ Մ. Խորենացիի վաւերական մէկ վկայութիւնն է. այսինքն թէ «Յեւթն եւ ի տասներորդն ամի թագաւորութեանն Տըր-դատայ դտաք նստեալ յաթու սրբոյ Առաքելոյն Թադէոսի զնախահայրն մեր Գրիգորիոս»¹¹⁴։ Վաւերական Վոչեցիներ այս վրկայութիւնը, որովհետեւ պատմական այս մեծ եղելութիւնը, այն է Մ. Գրիգորի ձեռնադրութիւնը, սկստք է նշանակուած ըլլար հնագոյն վաւերագիրներու մէջ, եւ Խորենացիին ըսելու ձեւը ցոյց կու տայ թէ այդպիսի վաւերագիր մը գտած էր ան։ Վաւերագրին գոյութեան ապացոյց կրնայ ըլլալ հոն գործածուած թուականի ձեւն ալ, որ ժամանակի թուականի գործածութեան պաշտօնական ձեւն է. այսինքն՝ Հայոց թագաւորի տարեթիւի յիշատակութիւնը։ Ճիշտ ինչպէս Կորիւնի մօտ Գրոց գիւտը նշանակուած է. «Ի վեցերորդ ամի Վոսմալահոյ»։ Այս ձեւով թուականի գործածութիւնը հասարակաց էր Հայոց եւ Պարսից մօտ։ Եւ երբ հայկական թագաւորութիւնը վերցուեցաւ, մեր պատմական հնագոյն յիշատակները նշանակուեցան Պարսից թագաւորի տարեթիւով, ինչպէս կարելի է տեսնել Եղիշէի, Ղ. Փարպեցիի, Գիրք թղթոցի պաշտօնական յիշատակութիւններուն մէջ։ Ուստի Մ. Խորենացիի ըով Գրիգորի ձեռնադրութեան թուականին համար յիշուած «Յեւթն եւ ի տասներորդի ամի Տրդատայ» հնագոյն վաւերագիր մը ենթադրել կու տայ։

Հոս կը մնար ճշտել Տրդատի թագա-
ւորութեան առաջին տարուան թուականը :
Մ. Խորենացին իր անձնական քննու-
թեամբ գտած էր որ Դիոկղետիանոսի եր-
րորդ տարին եղած ըլլայ, ինչպէս ինք
կ'ըսէ . « Մանրախուզիւ քննեալ գտաք
ղթադաւորելն Տրդատայ յերրորդ ամի
Դիոկղետիանոսի»¹¹⁵ : Բայց Խորենացին իր
քննութեան մէջ կ'ընար սխալիլ, ինչպէս
Մանանդեանի պատմական նոր ուսումնա-
սիրութիւնը ցոյց կու տայ : Ուստի ըն-
տրելագոյն է դիմել ուրիշ աւելի ապահով
աղբիւրի . և ահա Սեբէոսի վերագրուած
պատմութեան եռանուն ցանկին մէջ պահ-
ուած կը մնայ Տրդատի թագաւորութեան
սկզբնաւորութեան ստույգ տարին, որ է
« Ի հնգետասաներորդի ամի Դիոկղետիա-
նոսի» : Այս թուականը (298) պատմական
նոր ուսումնասիրութիւններով ալ հաս-
տատուած՝ պէտք է ըսել թէ վաւերական
թուականն է Տրդատի թագաւորութեան
սկզբնաւորութեան : Եւ ևրիւռ աղբիւրներու
տուեալները միացնելով՝ կ'ունենանք Ս.
Գրիգորի ձեռնագրութեան բուն թուակա-
նը . այսինքն 314 տարին : Այս նոյն թուա-
կանը, ինչպէս տեսանք, Կեսարիոյ Ժողով-
քին թուականին հետ կը նոյնանայ, ուր
տեղի ունեցած է Ս. Գրիգորի ձեռնագրու-
թիւնը, անոր նորայայտ յունարէն վար-
քին համաձայն : Եւ իրարմէ անկախ ու-
սումնասիրութիւններու հանդիպումը, կը
համարիմ թէ մեզ կ'առաջնորդէ պատմա-
կան ստուգութեան :

(Շարունակելի)

Է. ՊՕՂՈՍ ԱՆԱՆԵԱՆ

114. Մ. Խորենացի, Պատմութիւն, Բ. Ղա. 52 379:

115. Մ. Խորենացի, Պատմութիւն, Բ. 2ր. էջ 345:

ՄԵՐ ՆԱԽՆԵԱՑ ՀԱԻԱՏՔԸ

ՊԱՏԱՐԱԳ ՎԱՍՆ ՆՆԶԵՑԵԼ ՈՅ

(Շարք. տեղիս թարգմ. 1959, թ. 11-12, էջ 259)

11.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՃԻՇԵՑԻ

ԺԳ. զարու մեր եկեղեցական հեղինակ-
ներուն մէջ անուանի է Յովհաննէս Արճի-
շեցի, Տուրուբերանի Քաջբերունեաց դա-
ւառէն, աշակերտ Ներսէս Գլաճորեցիի եւ
դասընկեր՝ համբաւաւոր Եսայի Նշեցիի։
Յովհաննէս Արճիշեցի Թողած է «Մեկնու-
թիւն ահաւոր խորհրդոյ սրբոյ Պատարա-
գիւն», որ ունեցած է երեք տպագրու-
թիւն. առաջին երկուքը Պոլիս (1717ին եւ
1799ին), վերջինը Կալկաթա, 1830ին։
Գրքին խորագրին մէջ իսկ յայտարար-
ուած է «արտահանեալ ի մեկնութեանց
հոսրովու Անձեացեաց Եպիսկոպոսի, եւ
Ներսէսի Լամբրոնացոյ՝ վերատեսչին
Տաքսոնի, կարնելով եւ պարգաբանելով»։
Իրապէս Արճիշեցի հետեւող մըն է իր եր-
կու լուսամիտ նախորդներուն, եւ անոնց
նման՝ մեզի չափ կարեւոր դասեր կու տայ
ննջեցեալներու ի նպաստ պատարագ մա-
տուցանելու հարցին նկատմամբ. ընդհան-
րապէս կը կրկնէ եւ կը վերահաստատէ
Լամբրոնեան աւանդութիւնը. բայց միա-
ժամանակ ունի իւրայատուկ բացատրու-
թիւններ, որոնք աւելի եւս կը պարզա-
բանեն մեր հարցը։

1. - Արժէշեցիլ, ամէնէն առաջ, քննելով «Եւ գիւրդ յամենայն ատուր հրաման ընկալա՞մ պատարագիլ գրիխտոս», կը թուէ չանազան պատճառներ. նախ, մարդոց ազանազան պատճառներ. սոյթաքումները. մէնծորեայ մեղապարտ. սոյթաքումները. Մեղաւոր-երկրորդ ամէնծորեայ մահները: Մեղաւոր-ներուն դարձ եւ փրկութիւն կը պարզեւէ պատարագիլ սուրբ Զոհը, ննջեցեալներուն՝ յաւիտեանական կեանքի:

Արժիշեցիկ համաձայն, ամեն օր պահե

է սուրբ պատարաւ մատուցանել, որով-
հետեւ ամէն օր ննջեցեալ ունինք:

2. — Իսկ թէ սուրբ Պատարագը ննջեցեալներու փրկութեան համար մեծ նըպաստ է, այդ կը փաստէ Ս. Գրքի վկայութեամբ. Քրիստոսի մահով — կը յարէ Արժիշեցի — հին ուխտի ննջեցեալները փրկուեցան. ուրեմն հիմա մեր ննջեցեալներն ալ կը փրկուին սուրբ Պատարագով՝ որ Քրիստոսի Զոհին յիշատակն է, անոր անարիւն կրկնութիւնը, շարունակութիւնը: Արժիշեցի այսպէս կը խօսի.

«Եւ ոչ կենդանեացն միայն՝ որք հաւատով հաղորդին՝ լինի սա փրկութիւն, այլ եւ մեռելոց, որք այնու հաւատով եւ յուսով ի Քրիստոս ննջեցին: Քանզի մահն Քրիստոսի ոչ միայն կենդանեաց եղբւր փրկութիւն, այլ եւ մեռելոց, որպէս ասէ Պետրոս. եւ ոգւոցն որք էին ի դժոխս՝ երբեալ անտարանեաց (Ա. Պետր. Գ. 19): Եւ որպէս յայնժամ չարչարանք եւ մահն Քրիստոսի՝ կենդանեաց եւ մեռելոց արար փրկութիւն, նոյնպէս եւ այժմ յիշատակ մահու նորին եւ կատարումն՝ անկէ փրկութիւն եւ մեռելոց»²:

3. - Ապա կ'անցնի թուելու ննջեցեալ-
ներու տեսակները, բացատրելու համար
թէ որո՞նց իսկապէս փրկաւ է սուրբ
Պատարագը, եւ որոնց համար ի գուր:
Այստեղ կը կրկնէ «Յաճախապատում»էն
ի վեր մեզի յայտնի վարդապետութիւնը.
կը զանազանէ անպէղջ մեղաւորները զրգ-

1. *Յովհ. Արճիշեցի*, Մեկնութիւն ակաւոր խորհրդոյ սրբոյ Պատարագին, *սպ. Կալկաթա*, 1830, Էջ 8-9:

2. U_{5q} , 49 9:

3. - Երբորդ նորոթիւնը, զոր կը դրոտնենք Արճիչեցիի քով յայտնապէս, ամէնօրեայ պատարագի պատճառներու ներկայացումն է. այդ պատճառներէն մէկն է այն՝ որ ամէն օր ննջեցեալ կայ. հետեւաբար, ամէն օր պէտք է պատարագ մատուցանել. քանի որ սուրբ Պատարագը կենդանեաց եւ ննջեցելոց համար է: Ասիկա պարզ ու բնական պատճառաբանութիւն մըն է, որ սակայն լիովին կը ներկայացնէ Հայ Եկեղեցւոյ ըմբռնումը ԺԳ. դարուն:

4. - Արճիչեցի կը պայքարի նաեւ - թէ - եւ շատ աւելի մեղմ շնորհով քան Լամբրոնացին, եւ ասիկա ցոյց կու տայ թէ Ժողովրդական թիւր ըմբռնումները հետըհետէ նուազած էին - անոնց դէմ՝ որ կը կարծէին նուիրատուութեամբ պնել սուրբ Պատարագը եւ մէկ ննջեցեալի յատկացումն: Ասիկա անկարելի է, ըստ Արճիչեցիի. որովհետեւ սուրբ Պատարագը, թէեւ մէկ ննջեցեալի համար կրնայ մատուցուիլ, բայց միաժամանակ համայն աշխարհի կարիքներուն համար աղերսներով լի է: Ասով հանդերձ, սակայն, նուիրատուն լիով կը հասնի իր նպատակին, կը ստանայ իր հայցուածքը. մանաւանդ թէ՛ բոլոր աշխարհի վրայ մատուցուած սուրբ Պատարագներէն բաժին կ'ելլէ անոր, ըստ իր հաւատքին եւ հոգեկան տրամադրութիւններուն:

5. - Հուսկ Արճիչեցի կը զանազանէ նաեւ ննջեցեալներու երկու դասակարգ, անդիւր եւ զղջացեալ քրիստոնեաներու. այս վերջինները, եթէ նոյնիսկ բոլոր կեանքով մեղքի մէջ ապրած ըլլան, բայց գոնէ վերջին վայրկեանին զղջացած, կրնան օգտուիլ սուրբ Պատարագի տիեզերական արդիւնքներէն: Այս կէտին մէջ նոյնը կ'աւանդէ ինչ որ կ'աւանդէին «Յաւախապատում»ի հեղինակէն սկսեալ բոլոր միւսները, որոնց ծանօթ ենք արդէն:

Հիմա մեզի կը մնայ հարց տալ թէ ինչպէս Ամենապատիւ Պատրիարք Խաչատուրեան համարձակած է հեղինակօրէն

այսքան բացայայտ ճշմարտութեան մը մասին անճիշտ պաղտաբարներ յայտնել եւ նոյնիսկ ծիսական կարգադրութիւններ կատարել: Երբեք չենք կրնար խորհիլ որ Պոլսոյ Ամենապատիւ Պատրիարքը տեղեակ չըլլայ Արճիչեցիի գրութիւններուն: Բայց ինչ որ իրականութիւն է, այն է՝ թէ Գարեգին Պատրիարքի պատգամները բոլորովին հակոտնեայ են Արճիչեցիի աւանդութեան:

Աւելի զարմանալին այն է, ինչ որ Ժամանակին Փառէն Սրբազան եւս կը յայտարարէր՝ իրր թէ Հայոց քով ննջեցեալներու ի նպատակ պատարագ մատուցանելու սովորութիւնը նորամուտ է, եւ օտար աղբեցութիւններու արդիւնք է¹⁴. Փառէն Սրբազան շատ լաւ ծանօթ էր Արճիչեցիի գրութիւններուն, որովհետեւ բազմաթիւ անգամ ուսումնասիրութեան փորձեր ալ կատարած է Լամբրոնացիի եւ Արճիչեցիի Պատարագամատուցներուն միջեւ¹⁵: Արդ, մենք տեսանք որ Արճիչեցիի համաձայն, ննջեցեալներու հոգւոյն ի նպատակ պատարագ մատուցանելու սովորութիւնը շատ հին է, նոյնիսկ առաքելական շրջանէն մընացած նուիրական աւանդութիւն. ինք Փիլիպպոս առաքելին կը վերադրէ զայն¹⁶. Իրմէ առաջ այդ հնաւանդ սովորութեան պաշտպան կանգնած էին Գրիգոր Սարկաւազապետ, զոյգ Ներսէսները, Լամբրոնացի ու Շնորհալի, անոնցմէ առաջ՝ Պօղոս Տարօնեցի. նոյնը կը հաւատտէին Գրիգոր Նարեկացի եւ Խոսրով Անճեւացի: Հետեւաբար, եթէ երբեք նորամուտ բան մը կայ, ատիկա ո'չ թէ ննջեցեալներու ի նպատակ պատարագ մատուցանելու սովորութիւնն է, այլ Փառէն Սրբազանի այդ վճիռն է, որուն բժբարտաբար զոհ է դացած նաեւ Պոլսոյ Ամենապատիւ Պատրիարքը:

(Շարունակելի)

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

14. Հասկ, ԺԵ (1946, Թ. 9-10), էջ 249-251:

15. Հասկ, ԺԺ. (1950) էջ 4, 104, 144:

16. Յովհ. Արքիշեցի, Մեկն. անդ, էջ 15:

ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑԻԻ ՏԱՂԵՐՈՒՆ

ՔԻՒՐՏԵԱՆ ՀԱՒԱՔԱԾՈՅԻ ՕՐԻՆԱԿԸ

Թերթ-Բ' 47: Ծաւալ՝ 6×7, 3 մատնաչափ: Նիւթ՝ եւրոպական ջրանիշեալ թուղթ: Գրութիւն՝ միասին, իւրաքանչիւր թերթի ներքին եւ արտաքին լուսանցքները բաժնող ուղղաձիգ կարմիր դծերու միջեւ: Գիր՝ սղագրեալ, չեղադրի մօտեցող վատ նոտրգիր: Տաղ՝ 23: Մելան՝ սև: Որեւէ դարդարանք չունի: Հանգամանք՝ ինծի հասած անկաղմ, խոնաւութենէ թերթերը արատաւորուած: Վերակաղմել տուի Ուիլիթս շաքանակադոյն անդարդ կաշեախտակ կաղմով, ներսէն մետաքս դորշ լաթով պատած: Զեռագիրը ամբողջ է:

Պարունակութիւն.

Ա. պրակին առաջին թերթը կը սկսի «Քան զամենայն դործս չարից, հպարտութիւն»: Ամբողջ տողը սև մեղանով դծաբաշ ջնջուած եւ տակը աւելի նուրբ դրով՝ «Վ(ա)ս(ն) հպ(ա)րտութե(ան) յառաքէլ Վ(ա)րդ(ա)պ(ետ)ի առացե(ա)լ»: Քան զամ(ենայն) դործս չարեաց, Հպ(ա)րտութի(ւ)ն է զաղբալի Որ ա(ստուծո)յ է ատելի Եւ իւր սրբոցն է թշնամի: Հոս ներկայացուած իւրաքանչիւր երկտող՝ միայն մէկ տող է ձեռագրին մէջ, այս եւ յաջորդ տաղերուն մէջ: Տաղս ունի 13 տուն, որուն վերջին տունը կ'աւարտի էջ 1Բ. Ո՞վ առ(ա)քել անմիտ է (Հ)իմար Թէ չէ եւ դու դիւ(ա)ց նման, Զխոն(ա)րհուր(ւ)ն դու ի միտ առ, Զըդիս ի հուրն որ կ(ա)յ միշտ վ(ա)ռ

Անդ կը յաջորդէ «Տաղ զարեւ պարզոյ»:

Հոգ մի ասեր դարեւ
Թէ չէ իմ սիրտս կու արունի,
Ղ(ա)րեւն ի յօտ(ա)ր երկիր
Աւ(ա)ղ հայ դժու(ա)ր կու լինի:
Վեցուկէս տուն եւ կ'աւարտի նոյն էջին վրայ:

Սուրբն բարեխօս լինին ն(ո)ր(ա),
Որ հ(ա)սնի (ի)նք սրտի մուր(ա)տի,
Զաս(տո)ւանծն ողորմած ասեն եւն...:

Անդ կը յաջորդէ

«Տաղ անառակ որդւոյն»
Առ հայրդ աղաղակեմ,
Ան(ա)ռ(ա)կի որդոյս ողորմեա,
Հաց(ա)լից վարձկան(ա)ց,
Սեղանակից արժանի արայ:
Տասը տուն որ կ'աւարտի էջ 2ա.
Զմեղօք մեռե(ա)լ հոգիս
Կենդ(ա)ն(ա)ցոյց քեզ ի բն(ա)կու-
թիւ(ւն),

Մեղ(ա)յ տ(է)ր իմ մեղ(ա)յ,
Մեղ(ա)յ տ(է)ր ինձ ողորմեայ:
Անդ կը սկսի
« Դաւիթ երիցու դործե(ա)լ չարիքն է »,
Դաւիթ էրէց յըստ(ա)մպօլու
Տեղե(ա)լ սուրու մ(ա)ն(ա)ստիրու,
Դու նուիրակդ յուռումէլու
Ս(ա)հմ(ա)նողին հէրն անիծ(ա)ծ:

22 տուն եւ կ'աւարտի էջ 3ա.
Ով շատուեր էպսուդ,
Այս բ(ա)ւ(ա)կ(ա)ն լիցի յայժմոյս,
Իսկի չունիս առ ու նամուս,
Այլ աւելի գուրն անիծ(ա)ծ:
Տաղս Մարտիրոս Ղրիմեցու զրչէն է, եւ հրատարակած էի «Բաղմամէպ»ի մէջ, 1929, էջ 284-285:

էջ 3ա կը սկսի.

«Սօփիայ ք(ա)ղ(ա)քի իրեցոյ վերայ ա-
սացեալ»: